

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի կառավարությունը,
այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով 2001թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության և
Վրաստանի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ
անվտանգության մասին» պայմանագրի դրույթները,

ցանկանալով բարելավել դիվանագիտական ներկայացուցչությունների և
հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների
աշխատանքային հնարավորությունները,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կողմերի դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական
հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամներին, փոխադարձության հիման վրա
և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, թույլատրվում է ընդունող
պետությունում զբաղվել վարձատրվող գործունեությամբ: Թույլտվություն ստացած
ցանկացած անձ ենթարկվում է ընդունող պետության՝ իրականացվելիք
գործունեության կատարումը կարգավորող պայմանների մասով ազգային
օրենսդրությանը:

ՀՈԴՎԱԾ 2

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի նպատակներով՝

ա) «դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի անձնակազմ» նշանակում է՝ ուղարկող պետության ցանկացած աշխատող՝

i. ով ընդունող պետության քաղաքացի չէ կամ չունի նրա տարածքում մշտական բնակության իրավունք, և

ii. ով ընդունող պետության տարածքում գտնվող դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի աշխատող է՝

բ) «ընտանիքի անդամ» նշանակում է՝ դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի ընտանիքի ցանկացած անդամ՝

i. ով ընդունող պետության կողմից ճանաչվել է որպես այդպիսին, և

ii. ով կազմում է դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի անձնակազմի պաշտոնական կենցաղավարության մաս՝

գ) «Վարձատրվող գործունեություն» կդիտարկվի աշխատանքի ցանկացած ձևը՝ որպես ինքնազբաղված անձ կամ որպես աշխատող, որից եկամուտ է ստացվում՝

դ) «Շահառու» նշանակում է՝ սույն հոդվածի «բ» կետով սահմանված իմաստով՝ ընտանիքի ցանկացած անդամ, որն ընդունող պետությունում վարձատրվող գործունեություն իրականացնելու համար ստանում է թույլտվություն:

ՀՈԴՎԱԾ 3

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. Վարձատրվող գործունեությամբ զբաղվելու համար թույլտվություն ստանալու դիմումները համապատասխան դիվանագիտական ներկայացուցչության կողմից ներկայացվում են ընդունող պետության արտաքին գործերի նախարարություն հայտագրի միջոցով: Տվյալ անձի, ում համար հայցվում է թույլտվություն, սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանված՝ ընտանիքի անդամ լինելու փաստը ստուգելուց և պաշտոնական դիմումը քննարկելուց հետո ընդունող պետության արտաքին գործերի նախարարությունը անհապաղ և պաշտոնապես տեղեկացնում է

հավատարմագրող պետության դեսպանությանը, որ ընտանիքի անդամը աշխատելու թույլտվություն է ստանում՝ համաձայն ընդունող պետության ազգային օրենսդրության:

2. Նշված թույլտվությունները տրվում են այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի անձնակազմը ընդունող պետությունում մնում է հավատարմագրված:

3. Սույն Համաձայնագրի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես Կողմերի միջև վկայականների, գիտական աստիճանների կամ կրթության ինքնաբերաբար ճանաչում:

ՀՈԴՎԱԾ 4

ՎՃԱՐՆԵՐ

Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի համաձայն աշխատանքի թույլտվությունների տրամադրման համար գումար չի գանձվում:

ՀՈԴՎԱԾ 5

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Սահմանափակումներ զբաղվածության կամ վարձատրվող գործունեության բնույթի կամ տեսակի, որոնցում շահառուները կարող են ներգրավվել, չկան: Այնուամենայնիվ, գործունեության այն տեսակների դեպքում, որոնց համար պահանջվում են հատուկ որակներ կամ որակավորումներ, անհրաժեշտ է, որ շահառուն համապատասխանի ընդունող պետությունում այդպիսի մասնագիտությունների կամ գործունեության կատարումը կարգավորող կանոններին:

2. Թույլտվությունը կարող է մերժվել գործունեության այն տեսակների դեպքում, որոնք, ազային անվտանգության նկատառումներից և այլ ազգային շահերից ելնելով, կարող են իրականացվել միայն ընդունող պետության քաղաքացիների կողմից:

ՀՈԴՎԱԾ 6

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Վարձատրվող գործունեությամբ զբաղվելու թույլտվության գործողությունը դադարում է, երբ.

ա) այն անձը, որին շահառուն ուղեկցում է, ավարտում է իր առաքելությունը ընդունող պետությունում, կամ

բ) շահառուն դադարում է բնակվել ընդունող պետությունում որպես դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի անձնակազմի ընտանիքի կամ կենցաղավարության անբաժանելի անդամ:

2. Շահառուին տրամադրված թույլտվության ժամկետը դադարում է դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի անձնակազմի՝ ընդունող պետությունում իրենց պաշտոնավարումն ավարտելու օրվանից առավելագույնը երեսուն (30) օրվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 7

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Այն դեպքերում, երբ վարձատրվող գործունեություն իրականացնելու թույլտվություն ունեցող շահառուն, 1961թ. ապրիլի 18-ի՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի, 1963թ. ապրիլի 24-ի՝ «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի կամ ցանկացած այլ կիրառելի միջազգային փաստաթղթի դրույթների համաձայն, օգտվում է ընդունող պետության քաղաքացիական և վարչական իրավագործության նկատմամբ անձեռնմխելիությունից, այսպիսի անձեռնմխելիությունը չի տարածվում վարձատրվող գործունեություն իրականացնելու ընթացքում կատարած ցանկացած գործողության վրա, և նրա վրա տարածվում է ընդունող պետության քաղաքացիական կամ վարչական օրենսդրությունը:

ՀՈԴՎԱԾ 8

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴԻՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Եթե վարձատրվող գործունեություն իրականացնելու թույլտվություն ունեցող անձն օգտվում է ընդունող պետության քրեական իրավազրության նկատմամբ անձեռնմխելիությունից, ըստ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի վերոնշյալ կոնվենցիայի 31-րդ և 37-րդ հոդվածների կամ Կողմերի համար պարտադիր ուժ ունեցող այլ կիրառելի միջազգային համաձայնագրի, ուղարկող պետությունը լրջորեն դիտարկում է այդ անձի՝ քրեական հետապնդման նկատմամբ անձեռնմխելիությունը վերացնելու վերաբերյալ ընդունող պետության ցանկացած դիմում, եթե այդ անձը պատասխանատու է վարձատրվող գործունեության իրականացման ժամանակ քրեական հանցագործություն կատարելու համար:

2. Քրեական հետապնդման նկատմամբ անձեռնմխելիությունից հրաժարվելը պետք է լինի գրավոր:

3. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն քրեական հետապնդման նկատմամբ անձեռնմխելիությունից հրաժարվելը չի տարածվում պատիժն ի կատար ածելու նկատմամբ անձեռնմխելիության վրա, որի համար անհրաժեշտ է հայցել նոր՝ հատուկ հրաժարում:

ՀՈԴՎԱԾ 9

ՀԱՐԿԱՅԻՆ ՌԵԺԻՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1. 1961թ. ապրիլի 18-ի՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի, 1963թ. ապրիլի 24-ի՝ «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի և Կողմերի համար պարտադիր ուժ ունեցող այլ կիրառելի միջազգային կոնվենցիաների շրջանակներում ընդունող պետությունում վարձատրվող գործունեության մեջ ներգրավված շահառուները կրում են իրենց գործունեության ընթացքում ստացած և այդ գործունեությունից բխող եկամտի նկատմամբ կիրառվող պարտավորություններ՝ ընդունող պետության ազգային օրենսդրության համապատասխան:

2. Սոցիալական ապահովության ծրագրերից Շահառուների օգտվելը կարգավորվում

է ընդունող պետության ազգային օրենսդրությամբ սահմանված պայմանների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 10

ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ Կողմերի միջև ծագած ցանկացած վեճ կարգավորվում է դիվանագիտական ուղիներով՝ Կողմերի բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 11

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն որպես առանձին փաստաթուղթ և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն: Նման ձևով կազմված փաստաթղթերը կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 12

ՌԻՓԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումն ստանալու 30-երորդ օրը, որով Կողմերը միմյանց ծանուցում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերը կատարելու մասին:

2. Յուրաքանչյուր կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին գրավոր ծանուցելով այն դադարեցնելու մասին: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարում է դադարեցման մասին ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից 6 ամիս հետո:

Կատարված է Թբիլիսի քաղաքում, 2024 թվականի հունվարի 26 -ին, երկու
բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն և անգլերեն. բոլոր տեքստերն էլ
հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման հետ կապված ցանկացած տարաձայնություն
առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Վրաստանի Կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելու մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝**



[Handwritten signature]
Նելի Սարոյան